ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 431-Ա/2 10.04.2020թ

ԱՏՈՄ ՎԵՐԱԿԱՑՈՒԻ ԽԱՉՔԱՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՀԱԱԳԱՅՈՒՄ (ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ) ԳՏՆՎՈՂ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏԻ ԱՅԳՈՒՄ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի N 471-Ն որոշման 3-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Ատոմ Վերակացուի խաչքարի կրկնօրինակի պատրաստման, տեղափոխման և Հաագայում (Նիդերլանդների Թագավորություն) գտնվող Խաղաղության պալատի այգում տեղադրման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին «1075. Մշակութային ժառանգության ծրագրի» «21003. Քանդակների պատրաստման և տեղադրման աշխատանքներ» միջոցառման շրջանակում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) նախատեսված գումարներից հատկացնել 6288.0 հազար (վեց միլիոն երկու հարյուր ութսունութ հազար) դրամ՝ 2020 թվականին Ատոմ Վերակացուի խաչքարի կրկնօրինակի պատրաստման, տեղափոխման և Հաագայում (Նիդերլանդների Թագավորություն) գտնվող Խաղաղության պալատի այգում տեղադրման ծախսերն ապահովելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Հայաստանի պատմության թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

4. Նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության և ֆինանսաբյուջետային վարչությունների պետերին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրի կատարման նկատմամբ հսկողություն, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման, բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների ընդունման և պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների կազման և ստորագրման գործառույթները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ն. Խաչատուրյանին:

ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
----- ---------- 2020 թ.
N ------- հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր

Ատոմ Վերակացուի խաչքարի կրկնօրինակի պատրաստման, տեղափոխման և Հաագայում (Նիդերլանդների Թագավորություն) գտնվող Խաղաղության պալատի այգում տեղադրման

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի պատմության թանգարան»ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ք. Երևան, Հանրապետության Հրապարակ 4
3	Ծրագրի անվանում	Ատոմ Վերակացուի խաչքարի կրկնօրինակի պատրաստման, տեղափոխման և Հաագայում (Նիդերլանդների Թագավորություն) գտնվող Խաղաղության պալատի այգում տեղադրման ծրագիր
3.1	Բովանդակություն	Նիդերլանդների Թագավորություն ՀՀ վարչապետի պաշտոնական այցի շրջանակում նախատեսվում է այցելություն Ասսեն քաղաքի Դրենտս թանգարան և Հաագայի «Խաղաղության պալատ», ուր պետք է տեղի ունենա Հաղպատի վանական համալիրի, Սուրբ Նշան եկեղեցու պատին ագուցված (1004 թ.) Ատոմ վերակացուի խաչքարի կրկնօրինակը նվիրաբերելու և Խաղաղության պալատի այգում դրա բացման արարողությունը
3.2	Նպատակ	ՀՀ վարչապետի այցելության շրջանակում հայկական խաչքարագործության հարուստ արվեստի նմուշը արտերկրում ներկայացնելու, մեր մշակութային արժեքները տարածելու, ինչպես նաև երկրների բարեկամությունն ամրապնդելու համար՝ հայկական խաչքար նվիրաբերելու և դրա բացման արարողությունն իրականացնելու նպատակով
3.3	Անցկացման ժամկետ	2020 թվական, ապրիլ-դեկտեմբեր
3.4	Անցկացման վայր	Հաագայում (Նիդերլանդների Թագավորություն) գտնվող Խաղաղության պալատ

3.5	Ակնկալվող արդյունքներ	Հաագայում (Նիդերլանդների Թագավորություն) գտնվող Խաղաղության պալատի այգում հայկական խաչքարի տեղադրում, ցուցադրում և նվիրաբերում
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Կատարված աշխատանքները նպաստելու են արտերկրի բազմամարդ քաղաքներից մեկում՝ հայ մշակույթի կոթողը հասանելի դարձնել լայն հասրակությանը և արդյունքում ստեղծել մեծ վարպետի աշխատանքի կրկնօրինակը